ԲԱԶՄԱՎԷՊ

Ը. ՏԱՐԻ. ԹԻՒ 21. | 1850 | ՆՈՅԵՄԲԵՐԻ 1.

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Ալափայէլեան վարժարանին նոր վարժապետ բացման հանդէսը։

ԱՐԿՈՒ ամիս առաջ հրատարակեցինք Ալափայէլեան վարժարանիս Գ դասուն ուսմանց վճարելուն հանդէսը և 'ի հայրենիս դառնալն. այսօր կը յուսամք ախորժելի լուր մ'ալ տալ բարեսէր ազգայնոց՝ նոյն վարժարանին նոր հանդիսով մը բացուելուն։ Այս վարժարանը իր բացուելէն 'ի վեր (1836) Պ ենետկոյ անուանի Մեծ Լրանդէն վրայ հոյակապ Փէղարոյ պալատան մէջ հաստատուած էր, որ ընդարձակութեամբ և պտտաբացութեամբն ալ հաճոյ էր բնակութեան, բայց պարտէզ ալ չունենալուն համար՝ ուրիշ յարմար տեղ մը փնտռելով գտանք, և այս տարի հոկտեմբերի մէջ փոխադրեցինք Ալափայէլեան վարժարանը քաղքիս Արմէնի ըսուած Թաղը Օէնոբիոյ ըսուած գեղեցիկ պալատը, որ թէ ընդարձակ և զուարճալի պարտիզովը և թէ շէնքին դիրքովը և պայծառութեամբն և բնակութեան դիւրութիւններովն՝ մեր դիտմանը յարմարագոյն, և աննման պալատ մըն է քաղքիս մէջ ալ։ Հոս մտան նոր եկած ուսանողքն ալ որ վարժարանիս Դ դասն պիտի ըլլան, առ այժմ 15 թուով։

Ինչպէս տարեկան ուսմանց վերջը Աստուծոյ գոհութեամբ կը կատարեմք, այսպէս սովորութիւն ունիմք սկիզբն ալ, մանաւանդ նոր դասու մը ուսմանց սկզբնաւորութիւնը՝ գոհաբանութեամբ օրհնել. մանաւանդ որ տեղն ալ նոր ըլլալով՝ պէտք էր տանը օրհնութիւնն

ալ խառնել բնակողաց օրհնեալքին հետ։ Այս հանդէսը ինչպէս որ կը վայլէ պիտի կատարէր մեր արհիապատիւ տէրն Հիւրմիւզեան արքեպիսկոպոս Գէորգ Աբբահայրն և Պուրատեան ու Պապիայէլեան վարժարանաց ընդհանրական Պերատեսուչն. սակայն ինքն այս միջոցին Հռոմ գտնուելով և չուզելով ալ որ ուշանայ վարժարանիս հանդիսական օրհնութեամբ բացումը, հաճեցաւ ոչ միայն հեռուէն օրհնել, այլ և հանդիսին կատարումը թողուլ քաղքիս մեծապատիւ կարդինալ պատրիարքին. այս արժանաւոր աստուածարեալ ծերունի հայրապետս ալ յանձն առաւ իր քաղցրութեամբն մեր խնդիրքը. և հոկտեմբերի 21ին առաւօտանց եկաւ իր դրան երեցներովը հանդիսապէս հագուած. մեր Պանքին միաբանքը, և բաց յայլոց՝ հանդիսին ներկայ էին Արիանդոն եպիսկոպոսապատիւ Աբբայն, Պարմինի թաղին աւագերէցը, և ուրիշ կրօնաւոր և աշխարհական քահանայք։ Մենուն ներկայութեամբը՝ ընդհանրական գոհութեան պատարագ մատուցաւ վարժարանին մատրան մէջ, և նորաբոյս ուսանողքն ալ իրենց թարմ մանքէն առաջ ջերմ սրտերնին ընծայ մատուցանելով անոր՝ որ ըսաւ, Ով՝ այլ տուք մանկտւոյդ գալ առ իս, արժանի եղան հաղորդուելու ամենասուրբ աստուածային Փրկչական մարմնոյն։ Պատարագէն վերջը մեր հայկական ծիսով երգեցուեցաւ Հոգւոյն սրբոյ ընդհանրական մաղթանքը. վերջը ծիրանաւոր հայրապետն ալ զգեստաւորելով իր կղերներովը՝ խնկարկեց Կենաց փայտին որ բաղմոցի վրայ դրած էր, և իրենց ծիսով շարական մը երգելով սուրբ Խաչին, նոյն քրիստոսեան ամենայաղթ նշանաւ կնքեց և օրհնեց ներկայ եղողքն հանդերձ տնով և տեղեաւ։

Ընկերաւ կը սեպեմ գրիչս թէ որ լռէ հոս յիշելու այն բարեպաշտական քաղցր և խորին զգայմունքը՝ որ թէ հայրապետին և թէ հանդիսականաց վրայ նշանապէս կ'երևար մանկանց հաղորդուելուն և բոլոր սրբազան հանդիսին ատեն։ Յիրաւի փոքրիկ էր հանդէսը արտաքուստ, բայց ներքին տեսարանը շատ մեծ էր, որովհետև վերէն աստուածութեան իսկ խորանը բացուած կ'երևար խումբ մը մանրիկ պարզ սրտելու վրայ իր արարչական շնորհքը թափելու, վարէն պար մը հոգեսէր և ազգասէր միաբանից՝ որ նոյն շնորհքը կը հրաւիրէին իջնելու անոնց և բոլոր ազգին վրայ. և իբրև երկու թևերէն ալ Հայոց և Լատինաց եկեղեցիք՝ Գրիգորի և Պեղբեստրոսի օրերուն պէս՝ փոխ առ փոխ իրենց ազգային լեզուովը և սուրբ երգերովն կը ձայնակցէին փառք տալու Աստուծոյ խոնարհ մատրան մը մէջ. և ամենուն փափաքն ու շունչը միացած կ'ելլար կը բարձրանար Աստուծոյ մեծ վայելչութեան առջև՝ Հայոց փոքրիկ տանը երջանկութիւն մաղթելու։

Սրբազան հանդիսէն ետև հայրապետը պտըտեցաւ բոլոր վարժարանը, և զմայլելով անոր վայելչութեանը և ամէն մասանց կարգաւորութեանը վրայ ինչպէս որ ստէպ կը բացատրէր իր ըզգացմունքը, դարձաւ վերջը հանդիսական դահլիճին մէջ բազմելով՝ ընդունեցաւ մանկանց խոնարհաբար յարգանքը, և հայրաբար զգայուն սրտով՝ անոնց օրհնութիւններ տալէն ետև, որովհետև անոնք դեռ իտալերէն չեն հասկընար, դարձուց խօսքը անոնց վրայ աշխատող միաբանից, որոնց ջանքին և գործոց ականատես վկայ է շատ տարիներէ 'ի վեր, և քաջալերեց անվեհեր սրտով երկայնամտել և շարունակել իրենց աստուածահաճոյ և ազգախնամ օգտին աշխատանքը։ Նշուշտ երկնային ձայն մըն էր այն աստուածարեալ հայրապետին ձայնը, որ կը քաջալերէր զունկնդիրքն՝ չի լքանելու բնաւ, թէ որ երբէք դրսէն կամ նաև բուն իրենց սիրական ազգէն ալ ելլան չի ճանչցողք իրենց աշխատանացն կամ նաև մեղադրողք ալ։

Երկու ժամ հայրապետը վարժարանս կենալէն ետև՝ դարձաւ իր տեղն.

երկրորդ օրը մանկունքն սկսան զուարթութեամբ իրենց ուսմանց ընթացքը։ Այս հանդիսէն շաբաթ մը վերջը՝ վարժարանը կրկին պատիւ մ՚ալ ունեցաւ, և կրկին քաջալերութիւն մը՝ վարժապետքն։ Աւայրմէն Անգղիացի բազմագէտ արքեպիսկոպոսն՝ ամիս մը առաջ կարդինալութեան բարձր աստիճանն ալ առնելով՝ Հռովմէն եկեր Լոնտրա կ՚երթար ուղղափառ եպիսկոպոսաց գահը նորէն կանգնելու Անգղիոյ մայրաքաղաքին մէջ. մասնաւոր դիտմամբ՝ Վենետիկէն ուղեց անցնիլ. և քաղքիս պատրիարքին հետ տեսութենէն վերջը՝ միտքը դրած ըլլալով երթալ մեր վանքն ալ, և օդուն ու ծովուն խառնակութենէն արգիլուելով, որովհետև չէր ալ կրնար ուշանալ և ճամբէն ետ մնալ, վանքին տեղ եկաւ Ռափայէլեան վարժարանը, և հաճութեամբ տեղն ալ տղայքն ալ տեսնելէն ետև, հոս յայտնեց՝ որ Հռովմէն եկած ատենը Որբազան քահանայապետն մասնաւոր յանձնարարութիւն ըրեր է իրեն երթալ մեր Մխիթարեան սրբոյն Ղազարու վանքը, և իր սուրբ ողջոյնը տալով քաջալերել զՄխաբանքը որ միամտութեամբ առաջ տանին իրենց բարեսէր ջանքն՝ զոր ինքն ալ իր աստուածային և առաքելական օրհնութեամբն կը հաստատէ։

Երեքրդ էր Թերևս հոս այս միխթարութիւնս և քաջալերքս ալ հրատարակել, թէ որ միայն մեզի առանձնական շնորհք մը սեպէինք. բայց երբոր մեր վարժարանաց և ազգերնուս ալ վերաբերեալ կը տեսնեմք, չենք կրնար լռել. մանաւանդ այս ժամանակիս, որ դժբաղդութեամբ երբեմն խառնակ ձայներ կը լսեմք ազգերնուս միջէն, որ հակառակ կ՚ելլան մեր ջանիցն և դիտմանն զոր երկինք ալ կ՚օրհնէ, երկնից երեսփոխանն ալ, և այսպիսի աստուածարեալ և իմաստուն հայրապետը ալ։

Անգլիսեայ կարծիքը ինչ սկզբամբ ալ ըլլայ՝ մենք միշտ խաբուած սեպելով և մեր կողմէն ներելով ճանչցած կամ չճանչցած փնտռներնուն, կը թողումք ժամանակին անաչառ ատեանին քննութեանը. յորդորելով մենք զմեզ՝ որ դժարութեանց մէջ ալ ետ չկենամք՝ Աստուծոյ և ազգին նուիրած ջանքերնէս. զազգը՝ որ հակառակ կարծեաց մէջ ալ ընտրէ զուղիղն. և մեր աշակերտքն ալ որ առաքինաբար հաւատարիմ ըլլան իրենց առած բարի կրթութեանը և քրիստոնէական, մարդկային և ազգային պարտքերնուն. որով գայթակղութիւնքն ալ երթալով պակսին, և ազգերնուս օրերը հետզհետէ առջինները աւելի պայծառ և երջանիկ ըլլան։

ՌԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՅԵՏԻՆ ԲԱՆՔ

Աստուածապատիւ Ռափայէլեան վարժարանին, 'ի յորդորէ դասուն Ռափայէլեան վարժարանին, 'ի յողջոյնս 'ի հայրենիս։

Աթէ իսկ երբեք եղեալ յամենայն 'ի կեանս իմ օր խրախաւէտ և բարեգուշակ, և դարձեալ օր աղեխորով և սրտաձմլիկ, անշուշտ սերկեւանս օր է, ո՜ Աստուածապատիւ Ռափայէլ և արդոյ կաճառ Հայոց իմ և Աղբարոց պատուականաց. անշուշտ այս օր է, յորում ցնծալոյ աչօք տեսանեմ զի դասմի ողջոյն երեքտասան քաջուշիմ և ընտիր պարմանեաց ընծայի 'ի Թատր աշխարհիս իբրև ըմբիշք արութեան, զերկսայրին զէն՝ զառաքինութեան և զգիտութեան առեալ զանձամբ. առաջնոյն կոխել ըզգլուխ բարիատեաց բանսարկուին, երկրորդաւն 'ի բաց հալածել զտգիտութեան թանձրամած խաւար և լմնել օձանք զարգացման ազգին։ Ցխրութեան և տրտմութեան կոչեցի դարձեալ զօրս, զի ստիպիմ յակամայս բաժանել յետ սակաւուց 'ի սիրելեաց

1 Ռափայէլեան վարժարանին Երրորդ դասուն վերջին հարցաքննութեան հանդէսը տես եր. 273։